# Գիտության սերնդափոխության հիմնահարցը՝ առաջնային

*Հրատապ մեկ հարց եւ՝ սոցիալական խնդիրներ*



ԳԱԱ նախագահի **Ռադիկ Մարտիրոսյանի** կարծիքով, հետազոտական հաստատությունները վերազինման անհրաժեշտություն ունեն, քանի որ այս հաստատությունների տեխնիկական միջոցները վաղուց չեն նորացվել:

«Panorama.am»-ի թղթակցի այն հարցին, թե որքա՞ն միջոցներ են հարկավոր ողջ ոլորտի հետազոտական ենթակառուցվածքի նորացման համար, Ռադիկ Մարտիրոսյանը պատասխանեց, որ նվազագույն հաշվարկներով մոտ 100 մլն դոլար գումար կպահանջվի:

Նա նշեց, որ համագործակցում են 65 միջազգային գիտատեխնիկական ծրագրերի շրջանակներում, որոնց արդյունքում արդեն որոշ հաստատություններում եղել են տեխնիկայի թարմացումներ:

Հաջորդ հրատապ հարցը, ըստ նրա, վերաբերում է սոցիալական խնդիրներին՝ կապված շենքային պայմաններին, բյուջեից տրամադրվող ծախսերին՝ աշխատավարձեր, գործուղումներ, գրականության ձեռք բերում եւ այլն:

Կարեւոր եւ հրատապ հարցերի շարքում է նաեւ գիտության սերնդափոխության հիմնահարցը, որտեղ, Ռ. Մարտիրոսյանի խոսքով, անցյալ տարի որոշ դրական տեղաշարժեր են իրականացվել:

*«Մեր հիմնարկների տարբեր կառույցներում անցյալ տարի աշխատանքի է անցել տարբեր բուհերի 162 շրջանավարտ»*,- ասաց Ռ. Մարտիրոսյանը:

Նա հավելեց, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը առաջարկել է համակարգում երիտասարդ կադրերին խրախուսելու նպատակով ծրագիր իրականացնել, ըստ որի՝ հիփոթեքային վարկավորմամբ, 200 երիտասարդ գիտնականների ընտանիքներ բնակարանով կապահովվեն, ընդ որում, առաջին վճարման մուտքի գումարը բանակում ծառայություն անցած աշխատակիցների փոխարեն պետությունն է իրականացնելու:

Ռ. Մարտիրոսյանը նկատեց, որ գիտական աշխատանքը պետք է գրավիչ լինի երիտասարդ աշխատակիցների համար, որպեսզի նրանք ցանկանան ներգրավվել այս ոլորտում: